ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/179

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.11.2018թ. թիվ 27/26-3/21830-18 գրությամբ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00886056) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 20.11.2018թ. թիվ Ե-40/11-6410 գրության հիման վրա, 28.11.2018թ. նախաձեռնել է «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 20.11.2018թ. թիվ Ե-40/11-6410 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» և «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1» ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է Գնորդի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության, կողմից պայմանագրերի միակողմանի լուծմանը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արտյոմ Առաքելյանը:

3. <u>«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն 10.12.2018թ. դիմել է Բողոքներ քննող անձին՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» պայմանագրով «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել 45,000 կգ տավարի մսի պահածո:

Տավարի մսի պահածոն՝ համաձայն պայմանագրի, գնվում էր «Աշոտ Քերոբյան» ԱՁ-ից, որը չէր ապահովում ապրանքի կայուն որակը: Ընկերությունը տեղեկացրեց ՔԿ ծառայությանը, որ խմբաքանակը կփոխարինվի «Համլետ Հովսեփյան» ԱՁ-ի արտադրանքով, որի արտադրանքի տվյալ խմբաքանակը մատակարարվել էր ՀՀ ԱԱԾ-ին և առկա էր նույն խմբաքանակի «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի սննդամթերքի փորձաքննության արձանագրությունը: «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ն փորձաքննությունները կատարել է անփույթ և անպատասխանատու, ինչի մասին 07.11.2018թ. գրությամբ տեղեկացրել ենք ՔԿ ծառայության պետի տեղակալ Վ. Մելքոնյանին և խնդրել ենք պայմանագրով չնախատեսված փորձաքննությունը

կատարել Ընկերության ֆինանսական միջոցների հաշվին՝ այլ հավատարմագրված լաբորատորիայում:

«Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի արձանագրություններում մեկ նշվել է այլ չափորոշիչ /ԳՕՍՏ/, մեկ՝ ուղղվել ապրանքի զտաքաշը, նույն ԳՕՍՏ 26186-84-ում որպես չափորոշիչ նշել քլորիդների զանգվածային մաս 1,2-1,5, մեկ այլ դեպքում՝ 1,0-1,5, կատարելով հետևություն, որ 1,05 տոկոսը չի համապատասխանում պահանջներին:

Ընկերությունը պնդում է, որ «Համլետ Հովսեփյան» ԱՁ-ի արտադրանքն իր հատկանիշներով համապատասխանում է պայմանագրի տեխնիկական բնութագրին:

««ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում սահմանվել է, որ ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամկետները նախապես սահմանվում են Գնորդի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի:

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից բաշխման ցուցակի ժամանակացույցի որևէ խախտում չի կատարվել, հետևաբար գտնում ենք, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» պայմանագրի միակողմանի լուծումը իրավաչափ չէ:

Տվյալ պայմանագրի համար էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է թվով երեք բաշխման ցուցակ ՆՏ ապահովման բաժնի պետի ստորագրությամբ՝ 2018թ. հուլիս 4-ին՝ պղպեղ 3000 կգ, լոլիկ 6000 կգ, վարունգ 6000 կգ, հուլիսի 18-ին սմբուկ 4000 կգ, հոկտեմբերի 4-ին՝ սմբուկ 5000 կգ, քանակներով բաշխման ցուցակներ, ընդ որում հուլիսի 4-ի բաշխման ցուցակում Պատվիրատուի կողմից նշվել է, որ բանջարեղենի պահպանումը արդյունավետ իրականացնելու նպատակով մատակարարումներն անհրաժեշտ է իրականացնել տասնօրյա պարբերականությամբ՝ յուրաքանչյուր ՔԿ հիմնարկի բաշխման քանակի 1/3 չափով, հուլիսի 18-ի ցուցակում ծանոթությունը բացակայում է, հոկտեմբերի 4-ի ցուցակով պահանջվում է մատակարարումն իրականացնել երկու մասով:

Ստացվում է, որ սմբուկի, լոլիկի և վարունգի մատակարաումը պետք է իրականացվեր երեք անգամ, իսկ պղպեղինը՝ հինգ անգամ, սակայն փաստացի ՔԿ հիմնարկները պատճառաբանել են, որ բացակայում են բանջարեղենի պահմպանման պայմանները, և

արդյունքում Ընկերության աշխատակիցները յուրաքանչյուր հիմնարկ այցելել են տաս և ավելի անգամ: Ընկերության կողմից դուրս է գրվել ընդհանուր առմամբ 110 հարկային հաշիվ, որոնց թվում՝

- Արմավիր ՔՀ – 10 հատ,
- Սևան ՔՀ-13 հատ,
- Կոշ ՔՀ-11 հատ,
- Արթիկ ՔՀ- 11 հատ,
- Նուբարաշեն ՔՀ-15 հատ,
- Վանաձոր ՔՀ- 10 հատ,
- Վարդաշեն ՔՀ-12 հատ,
- Դատապարտյալների հիվանդանոց ՔՀ- 14 հատ,
- Աբովյան ՔՀ- 7 հատ,
- Հրազդան ՔՀ-7 հատ:

Ինչ վերաբերում է դեղձի թերմատակարարմանն, ապա Ընկերությունը դեղձի բաշխման ցուցակ էլ. փոստի մոիջոցով չի ստացել, մատակարարման ուշացման համար չի ահազանգվել:

Ելնելով վերոգրյալից, խնդրում ենք «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Աղասի Դանիելյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/179 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 28.11.2018թ. թիվ 27/26-3/21830-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 20.11.2018թ. թիվ Ե-40/11-6410 գրությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված

«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» և «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1» ծածկագրերով գնման պայմանագրերը.

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքվել են «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» և «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1» ծածկագրերով գնման պայմանագրերը (այսուհետ՝ համապատասխանաբար նաև Պայմանագիր 1 և Պայմանագիր 2).

Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի՝

• 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայամանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

• 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

• 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

• 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

• 2.2.4 կետի համաձայն՝ Գնորդը պարտավոր է ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

• 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

• 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

• 5.1 կետի համաձայն՝ Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

• 5.2 կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշվված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

• 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիր 1-ի 3.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 99,486,900 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Պայմանագիր 2-ի 3.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 10,128,270 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. ընթացքում՝ 1-ին կիսամյակում՝ 22500 կգ, 2-րդ կիսամյակում՝ 22500 կգ., ոչ ուշ, քան մինչև 15.12.2018թ. մատակարարել ընդամենը՝ 45,000 կգ տավարի մսի պահածո՝ հետևյալ տեխնիկական բնութագրով.

«Պահածոներ թարմ տավարի մսից պատրաստված, միսն ամբողջական կտորներով, բարձր տեսակի, առանց կողմնակի հավելումների, հերմետիկ փակ մետաղական տարաներով (մինչև 600գր.), որի վրա նշված լինի արտադրման տարեթիվը և զտաքաշը, ԳՕՍՏ 5284-84 կամ համարժեք: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 56.5%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավելի 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%: Պահպանման ժամկետը նշված լինի տարայի վրա: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների:

Գնորդի պահաջով՝ պահածոների պիտակի վրա, նշված լինի հետևյալ գրառումը՝ «Արտադրված է ՔԿՎ պատվերով, վաճառքի ենթակա չէ»:

Նույն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նշվել են ապրանքի մատակարաման ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների հասցեները՝

1. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ – ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2,
2. ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ – ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 7,
3. ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ – ք. Երևան, Նալբանդյան 104,
4. ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ – ք. Երևան, Արշակունյաց 2,
5. ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ – Կոտայքի մարզ, ք. Աբովյան,
6. ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ – Կոտայքի մարզ, ք. Հրազդան,
7. ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ – Կոտայքի մարզ, ք. Հրազդան, միկրոշրջան 45,
8. ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ – Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տավրոսի 20,

9. ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ – Շիրակի մարզ, գյուղ Հառիճ,

10. ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿՀ – Սյունիքի մարզ, ք. Գորիս, Նարեկացու 5,

11. ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ – Արագածոտնի մարզ, գյուղ Կոշ,

12. ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ – Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Չոբանքարա:

Պատվիրատուի կողմից սահմանվել են նաև հետևյալ լրացուցիչ պահանջները.

Գնորդի պահանջով մասնակիցները պարտավոր են պահանջվող փաստաթղթերի հետ, հրավերով սահմանված եռօրյա ժամկետում, ներկայացնել առաջարկվող ապրանքի(ների) նմուշները:

Մինչև յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումը՝ Գնորդի պահանջով, Վաճառողը պարտավոր է Գնորդին ներկայացնել տվյալ խմբաքանակի վերաբերյալ արտադրող կազմակերպության և(կամ) ՀՀ սննդի անվտանգության պետական ծառայության կողմից տրամադրված փորձագիտական եզրակացություն՝ ապրանքի որակին և տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Բոլոր ապրանքները պետք է ունենան որակի սերտիֆիկատ և լինեն գործարանային փաթեթավորմամբ՝ եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար:

Բոլոր ապրանքները մատակարարվելու են ՀՀ տարածքում տեղակայված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ, ապրանքների մատակարարումը և բեռնաթափումը իրականացվելու է աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն մատակարների միջոցներով, ուժերով և հաշվին, յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամկետները նախապես սահմանվում են Գնորդի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:

«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 28.09.2018թ. կնքվել է N1 համաձայնագիրը:

Նշված համաձայնագրի 1.1 կետով սահմանվել է հետևյալը. «Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պահեստներում առաջացել են մատակարարման ենթակա սննդամթերքի կուտակված քանակներ, կապված սնվող

անձանց թվաքանակի նվազման հետ, ինչպես նաև խուսափելով սննդամթերքի ավելի մեծ քանակի կուտակումներից, որոնց պահպանումը քրեակատարողական հիմնարկների պահեստներում առաջացնում են ավելորդ դժվարություններ, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին Պայմանագրի թիվ 1-ի հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարման ենթակա ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ սահմանելով մինչև 31.10.2018թ.»:

19.07.2018թ. Ընկերության կողմից ՔԿ ծառայությանը մատակարարված «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը (արատադրանքի կոդը՝ 1/695) ենթարկվել է լաբորատոր փորձաքննության, ինչի վերաբերյալ «Ստանդարտ Դիալոգ» փորձարկման լաբորատորիայի կողմից կազմվել է փորձարկման արձանագրություն N 630: Լաբորատորիայի կողմից տրված եզրակացության համաձայն՝ նմուշը մսի և յուղի զանգվածային մասի, քլորիդների զանգվածային մասի պարունակությամբ չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:

Վերոգրյալի առնչությամբ Պատվիրատուի կողմից 06.08.2018թ. Ընկերությանն ուղարկվել է ծանուցում, որով Պատվիրատուն՝ Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն՝ Ընկերությանը տրամադրել է 15 օր ժամկետ՝ մատակարարված և ՀՀ ՔԿ ծառայության պահեստներում առկա «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը անհատույց նոր խմբաքանակի ապրանքով փոխարինելու, ինչպես նաև պայմանագրով նախատեսված տուգանքը վճարելու համար:

15.08.2018թ. թիվ 40/11-4281 գրությամբ Պատվիրատուն դիմել է Ընկերությանը՝ հայտնելով, որ վերջինիս խնդրանքով 20.08.2018թ. «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի պահեստում առկա պահածոյի քանակությունից կատարվելու է կրկնակի նմուշառում, որը ենթարկվելու է լաբորատոր փորձաքննության, և խնդրել է ապահովել Ընկերության ներկայացուցչի մասնակցությունը՝ գործընթացն իրականացնելու համար:

03.09.2018թ. թիվ 40/11-4703 գրությամբ Պատվիրատուն կրկին դիմել է Ընկերությանը՝ տեղեկացնելով, որ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով նմուշառող մասնագետի մասնակցությունը կարող է ապահովվել միայն 2018թ.

սեպտեմբերի 5-ից հետո, և հայտնել է, որ կրկնակի նմուշառումը կիրականացվի 05.09.2018թ.:

05.09.2018թ իրականացվել են ՔԿ ծառայությանը մատակարարված «տավարի մսի պահածո» ապրանքատեսակի նմուշառումներ.

1. «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պահեստներից, (արատադրանքի կոդը՝ 1/956, տավարի մսի պահածո 07.03.2018թ.), ենթարկվել է լաբորատոր փորձաքննության, ինչի վերաբերյալ «Ստանդարտ Դիալոգ» փորձարկման լաբորատորիայի կողմից կազմվել է փորձարկման եզրակացություն N880: Տրված եզրակացության համաձայն՝ նմուշի մսի և յուղի զանգվածային մասի պարունակությունը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:

2. «Վարդաշեն» ՔԿՀ-ի պահեստներից, (արատադրանքի կոդը՝ 1/957-1, 1/957-2, 1/957-3,

1/.տավարի մսի պահածո 07.03.2018թ.,

2/.տավարի մսի պահածո 10.08.2018թ.,

3/.տավարի մսի պահածո 18.01.2018թ:

Արատադրանքը ենթարկվել է լաբորատոր փորձաքննության, ինչի վերաբերյալ «Ստանդարտ Դիալոգ» փորձարկման լաբորատորիայի կողմից կազմվել է փորձարկման եզրակացություն N 881: Տրված եզրակացության համաձայն՝

- նմուշ 1/957-1 մսի և յուղի զանգվածային մասի պարունակությունը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին,
- նմուշ 1/957-2՝ ճարպի զանգվածային մասի պարունակությունը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին,
- նմուշ 1/957-3՝ քլորիդների զանգվածային մասի պարունակությունը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:

3.«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի պահեստներից. (արատադրանքի կոդը՝ 1/955-1, 1/955-2, 1/955-3, 1/955-4):

1/ տավարի մսի պահածո՝ մետաղական մասում առկա ամսաթիվ 07.03.2018թ.,

2/ տավարի մսի պահածո՝ մետաղական մասում առանց ամսաթվի;

3/տավարի մսի պահածո 18.01.2018թ.,

4/ տավարի մսի պահածո 21.04.2018թ:

Արատադրանքը ենթարկվել է լաբորատոր փորձաքննության, ինչի վերաբերյալ «Ստանդարտ Դիալոգ» փորձարկման լաբորատորիայի կողմից կազմվել է փորձարկման եզրակացություն N 879: Տրված եզրակացության համաձայն՝

• նմուշ 1/955-1 մսի և յուղի զանգվածային մասի պարունակությունը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին,

• նմուշ 1/955-2՝ մսի և յուղի զանգվածային մասի, ճարպի, քլորիդների զանգվածային մասի պարունակությունը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին,

• նմուշ 1/955-3՝ քլորիդների զանգվածային մասի պարունակությունը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:

• նմուշ 1/955-4՝ մսի և յուղի զանգվածային մասի, քլորիդների զանգվածային մասի պարունակությունը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:

Պատվիրատուն 25.09.2018թ. թիվ 40/11-5167 գրությամբ դիմել է Ընկերությանը՝ հայտնելով, որ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը, որն ըստ լաբորատոր փորձաքննության արդյունքների չէր համապատասխանում 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրին, մինչ այդ օրը չի փոխարինվել տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով: Պատվիրատուն՝ հղում կատարելով Պայմանագրի 2.1.4 կետին՝ պահանջել է ապրանքի անհատույց փոխարինում պատշաճ որակի ապրանքով և զգուշացրել, որ հակառակ դեպքում կկիրառվի Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված դրույթը՝ համաձայն որի Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը:

Միաժամանակ, Պատվիրատուն առաջարկել է ապրանքի փոխարինումը կատարել հետևյալ մեխանիզմով՝

1. 5 աշխատանքային օրվա ընթացքում «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի պահեստում առկա պահածոն փոխարինել նոր ապրանքով:

2. Փոխարինված ապրանքի խմբաքանակից կատարել նմուշառում և ենթարկել լաբորատոր փորձաքննության (Ընկերության հաշվին):

3. Լաբորատոր փորձաքննության արդյունքերի համապատասխանության դեպքում Ընկերությունը տալիս է գրավոր հավաստում, որ ՔԿ ծառայության պահեստներում առկա մնացած ապրանքը կփոխարինվի նույն տեխնիկական բնութագիր ունեցող ապրանքով, ինչը մատակարարվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկ, և 5 օրվա ընթացքում կատարել ՔԿ ծառայության պահեստներում առկա պահածոյի փոխարինում համապատասխանող ապրանքով:

«Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ին 08.10.2018թ. ուղղված գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկում Պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքը փոխարինվել է նոր ապրանքով, ուստի անհրաժեշտություն է առաջացել «տավարի մսի պահածո» ապրանքատեսակի նոր խմբաքանակը ենթարկել լաբորատոր փորձաքննության, և խնդրել է 09.10.2018թ. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի ներկայացուցչի մասնակցությամբ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկում կատարել նմուշառում:

Նմուշառումը կատարվել է 09.10.2018թ. «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի պահեստներից (արատադրանքի կոդը՝ 1/1160), արտադրող՝ Աշոտ Քերոբյան, խմբաքանակ 124,250 կգ: Արատադրանքը ենթարկվել է լաբորատոր փորձաքննության, ինչի վերաբերյալ «Ստանդարտ Դիալոգ» փորձարկման լաբորատորիայի կողմից կազմվել է փորձարկման եզրակացություն N 1095: Տրված եզրակացության համաձայն՝ նմուշ 1/1160-ը մսի և յուղի զանգվածային մասի, քլորիդների զանգվածային մասի պարունակությամբ չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին:

Պատվիրատուն 18.10.2018թ. թիվ 40/11-5673 գրությամբ կրկին անգամ դիմել է Ընկերությանը՝ հայտնելով, որ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից 05.10.2018թ. փոխարինված «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի կողմից ենթարկվել է լաբորատոր փորձաքննության, որի արդյունքում պարզվել է, որ փոխարինված խմբաքանակը ևս չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին: Պատվիրատուն խնդրել է վերը նշվածի կապակցությամբ տալ պարզաբանումներ և դիրքորոշում:

27.10.2018թ. Պատվիրատուի և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների միջև կազմվել է արձանագրություն այն մասին, որ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից բերվել է մսի պահածո 122,105կգ քաշով, որը փոխարինվել է պահեստում առկա մսի պահածոյի հետ:

Փոխարինված խմբաքանակը ևս մեկ անգամ՝ Պատվիրատուի առաջարկով 29.10.2018թ. «Ստանդարտ Դիալոգ» փորձարկման լաբորատորիայի կողմից ենթարկվել է փորձաքննության՝ որի վերաբերյալ 01.11.2018թ. N 1303 եզրակացությունը դարձյալ ցույց է տվել, որ արտադրող՝ Հովսեփյանների մսի պահածոների կոմբինատ ԱՁ-ի կողմից արտադրված մսի պահածոն (խմբաքանակ 122100կգ, նմուշ 1/1303) մսի և յուղի զանգվածային մասի, քլորիդների զանգվածային մասի պարունակությամբ չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը պնդեց 10.12.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը, միաժամանակ Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրելով այն հանգամանքի վրա, որ «Ստանդարտ Դիալոգ» փորձարկման լաբորատորիայի կողմից 29.10.2018թ. կատարված նմուշառման վերաբերյալ 01.11.2018թ. տրվել է նույն՝ N 1/1303, թվով երկու եզրակացություն, որոնցում նմուշի արտադրանքի փորձաքննության արդյուքների թվային ցուցանիշներում առկա են անհամապատասխանություններ: Այսպես, փորձարկման արձանագրություններից մեկում ապրանքի ստացված զտաքաշը նշված է 619,6գ, իսկ մյուսում՝ 540,4գ, որպես փորձարկման ենթակա խմբաքանակ նշվել է 122100 կգ, մինչդեռ այն պետք է նշվեր 124 կգ 205 գրամ: Բացի այդ, ըստ նույն արձանագրության նշվել է, որ քլորիդների զանգվածային մասը կազմում է 1.05 տոկոս, որը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին: Այս կապակցությամբ Ընկերության ներկայացուցիչը ցանկացավ հայտնել, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրում նշված է, որ պահածոները պետք է համապատասխանեն ԳՕՍ-5284-84-ին, իսկ նշված ԳՕՍ-ի համաձայն՝ քլորիդների զանգվածային մասը սահմանված է 1.0-1.5 տոկոս, մինչդեռ թե բնութագրում և թե եզրակացության մեջ, որպես քլորիդների զանգվածային մասի տոկոս, նշվել է 1.2-1.5 տոկոսը: Այսինքն, եթե առաջնորդվենք ԳՕՍ-ով քլորիդների զանգվածային մասի համար սահմանված տոկոսային ցուցանիշով, ապա եզրակացությամբ արձանագրված

մատակարարված պահածոյի քլորիդների զանգվածային մասի տոկոսը համապատասխանում է ГОUS-5284-84-ի պահանջներին:

Ընկերության տնօրենը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ նշված անհամապատասխանությունները կասկած են հարուցել «Ստանդարտ Դիալոգ» փորձարկման լաբորատորիայի կողմից կատարված փորձարկումների ճշգրիտության և արժանահավատության առումով, ինչից ելնելով վերջինս խնդրել է Պատվիրատուին մատակարարված ապրանքի նոր խմբաքանակը ևս մեկ անգամ ենթարկել փորձաքննության՝ այս անգամ մեկ այլ հավաստագրված լաբորատորիայի կողմից: Սակայն, Պատվիրատուի կողմից Ընկերության առաջարկը գնահատվել է ոչ նպատակահարմար և առաջարկվել է, որպեսզի «տավարի մսի պահածո» արտադրող Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն վիճարկի «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը, պաշտպանելով իր արտադրության շահերը, որի համար «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին տրամադրվեց 3 օր:

16.11.2018թ. թիվ 40/11-6333 գրությամբ Պատվիրատուն դիմել է Ընկերությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում, «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ մատակարարված «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը 19.07.2018թ., ինչպես նաև 05.09.2018թ. «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից ենթարկվել էր լաբորատոր փորձաքննության և փորձաքննության արդյունքում «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը չի համապատասխանել պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին: Պայմանագրի համաձայն Ընկերությունը պարտավոր էր ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ մատակարարած տեխնիկական բնութագրին չհամապատասխանող 1198,9 կգ «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը, ողջամիտ ժամկետում, փոխարինել Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով և 05.10.2018թ. ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի պահեստում առկա «տավարի մսի պահածո» ապրանքատեսակի ամբողջ քանակը փոխարինվել էր նոր խմբաքանակով, որից

հետո 09.10.2018թ. «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից նոր խմբաքանակից վերցրած նմուշը ենթարկվել էր լաբորատոր փորձաքննության և փորձաքննության արդյունքում «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը նորից չէր համապատասխանել պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին: Անհամապատասխանության արդյունքները իմանալուց հետո, Ընկերությունը դիմել է ՔԿ ծառայությանը և խնդրել, որպեսզի հնարավորություն տրվի նորից իրականացնել չհամապատասխանող ապրանքի փոխարինում, քանի որ Ընկերության կողմից փոխվել էր «տավարի մսի պահածո» արտադրող կազմակերպությունը: ՔԿ ծառայությունը ընդառաջ գնալով Ընկերության խնդրանքին, հնարավորություն է տվել, որպեսզի «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը փոխարինվի Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով և 27.10.2018թ. փոխարինվել էր նոր խմբաքանակով, որից հետո 29.10.2018թ. «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից, արդեն նոր արտադրողի կողմից արտադրված, «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը ենթարկվել էր լաբորատոր փորձաքննության և փորձաքննության արդյունքում «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը նորից չէր համապատասխանել պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին: Ընկերությունը կրկին՝ 07.11.2018թ., դիմել էր ՔԿ ծառայությանը և խնդրել, որպեսզի «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը հավաստագրված մեկ այլ լաբորատորիայում ենթարկվի փորձաքննության, քանի որ «տավարի մսի պահածո» արտադրող՝ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն, վստահեցնում է, որ իրենց արտադրանքը համապատասխանում է պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին և «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ն այդ արտադրանքի համար տվել է ոչ ճիշտ փորձարկման եզրակացություն: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը Ընկերության խնդրանքը գնահատեց ոչ նպատակահարմար և 12.11.2018թ. իր գրությամբ առաջարկեց, որպեսզի «տավարի մսի պահածո» արտադրող Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն վիճարկի «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը, պաշտպանելով իր արտադրության շահերը, և դրա համար «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին տրամադրվեց ևս 3 օր՝ փորձարկման եզրակացությունը վիճարկելու համար: Հաշվի առնելով, որ նշված ժամկետն արդեն լրացել է, և չկա «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից տրված դրական փորձարկման եզրակացությունը, և հիմք

ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2018թ. նոյեմբերի 16-ից՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 31,198,9 կգ «տավարի մսի պահածո» ապրանքատեսակի մասով, որի ընդհանուր գումարը կազմում է 43,616,062,2 (քառասուներեք միլիոն վեց հարյուր տասնվեց հազար վաթսուներկու ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամ: 31,198,9 կգ Պայմանագրի շրջանակներում «տավարի մսի պահածո» ապրանքատեսակի դեռ չմատակարարված քանակի և ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկների պահեստներում առկա, սակայն Պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող քանակների հանրագումարն է (30,000 կգ+1,198,9 կգ): Նշված գումարի չափով Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծումից հետո՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 55,870,837,8 (հիսունհինգ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար ութ հարյուր երեսունյոթ ամբողջ ութ տասնորդական) ՀՀ դրամ (...):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն պետք է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պահեստներից ետ վերցնի իր կողմից մատակարարված, սակայն Պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող 1198,9 կգ «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը, որի գումարը՝ 1,676,062,2 (մեկ միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար վաթսուներկու ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամը, նույնպես պետք է պահվի «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին վճարման ենթակա գումարներից»:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 21.05.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1» ծածկագրով պայմանագրի վերաբերյալ Պատվիրատուն հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

Պայմանագրի N 1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, մրգերի և բանջարեղենների (բացի ճակնդեղից) մատակարարման ժամկետը սահմանված էր 2018թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, որը երկարաձգվել էր մինչև 31.10.2018թ.-ը, սակայն մինչ օրս նշված ապրանքները թերի են մատակարարվել (բացի ճակնդեղից և սալորից), իսկ դեղձ ընդհանրապես չի մատակարարվել: Վերը նշված

պայմանագրի շրջանակներում թերի մատակարարված մրգերի և բանաջարեղենների քանակները հետևյալն են՝

Հ/Հ	Անվանում	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Պայմանագրով նախատեսված քանակ	Մատա-կարարված քանակ	Չմատակարարված քանակ	Չմատակարարված ապրանքների գումար (ՀՀ դրամ)
1	դեղձ	կգ	159	4000	-	4000	636000,00
2	բիբար	կգ	139,98	10000	5670	4330	606113,40
3	պոմիդոր	կգ	118,98	16000	3644	12356	1470116,88
4	վարունգ	կգ	96	10000	7769	2231	214176,00
5	սմբուկ	կգ	94,98	20000	12613	7387	701617,26
	Ընդամենը						3628023,54

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2018թ. նոյեմբերի 16-ից՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 4000 կգ «դեղձի», 4330 կգ «բիբարի», 12356 կգ «պոմիդորի», 2231 կգ «վարունգի» և 7387 կգ «սմբուկի» մասերով, որի ընդհանուր գումարը կազմում է 3628023,54 (երեք միլիոն վեց հարյուր քսանութ հազար քսաներեք ամբողջ 54 հարյուրերորդական) ՀՀդրամ:

Նշված գումարի չափով Պայմանագրի միակողմանի մասնակի լուծումից հետո՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 6500246,46 (վեց միլիոն հինգ հարյուր հազար երկու հարյուր քառասունվեց ամբողջ 46 հարյուրերորդական) ՀՀդրամ»:

Վերոգրյալի կապակցությամբ Ընկերության տնօրենը բողոքներ քննող անձին հայտնեց, որ Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում սահմանվել է, որ ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամկետները նախապես սահմանվում են Գնորդի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի, և հավաստիացրեց, որ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից բաշխման ցուցակի ժամանակացույցի որևէ խախտում չի կատարվել, հետևաբար, Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծումն իրավաչափ չէ:

Պատվիրատուի ներկայացուցիչը բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի տեղակալի կողմից ստորագրված և հաստատված «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին՝

- 04.07.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից հուլիս ամսվա ընթացքում ենթակա է մատակարարման 3000 կգ բիբար, 6000կգ պոմիդոր և 6000 կգ վարունգ, ընդ որում՝ մատակարարումները պետք է իրականացվեն 10-օրյա պարբերականությամբ՝ բաշխման ենթակա ընդհանուր քանակի 1/3-ի չափով,

- 18.07.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից հուլիս ամսվա ընթացքում ենթակա է մատակարարման 4000 կգ սմբուկ,

- 07.08.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից օգոստոսի 8-ից 18-ը ընկած ժամանակահատվածում ենթակա է մատակարարման 3000 կգ սալոր և օգոստոսի 20-ից 30-ը ընկած ժամանակահատվածում՝ 2000 կգ դեղձ,

- 27.08.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից օգոստոսի 28-ից սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում ենթակա է մատակարարման 3000 կգ բիբար, 2000 կգ ճակնդեղ, 5000 կգ պոմիդոր և 4000 կգ վարունգ, ընդ որում՝ մատակարարումները պետք է իրականացվեն 10-օրյա պարբերականությամբ՝ բաշխման ենթակա ընդհանուր քանակի 1/3-ի չափով,

- 06.09.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից սեպտեմբերի 10-ից 14-ը ընկած ժամանակահատվածում ենթակա է մատակարարման 3000 կգ սալոր,

- 04.10.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից հոկտեմբերի 4-ից 22-ը ընկած ժամանակահատվածում ենթակա է մատակարարման 2000 կգ բիբար, 1500 կգ ճակնդեղ և 5000 կգ սմբուկ, ընդ որում՝ մատակարարումները պետք է իրականացվեն 7-օրյա պարբերականությամբ՝ բաշխման ենթակա ընդհանուր քանակի 1/2-ի չափով,

- 13.11.2018թ. տրամադրված ճակնդեղի ճշտված բաշխման ցուցակը, որի համաձայն, նոյեմբեր ամսվա ընթացքում ենթակա էր մատակարարման 13.000 կգ ճակնդեղ, ընդ որում «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկին բաշխումով նախատեսված 650

կգ ճակնդեղի քանակությունից 350 կգ-ը մատակարարել «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկ, իսմ մնացած 300 կգ-ը մատակարարել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկ:

Ընկերության տնօրենը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ տվյալ պայմանագրի համար էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է ընդամենը երեք բաշխման ցուցակ ՀՀ ՔԾ ՆՏ ապահովման բաժնի պետի ստորագրությամբ՝ 2018թ. հուլիսի 4-ին՝ 3000 կգ պղպեղի համար, 6000 կգ լոլիկի համար, 6000 կգ վարունգի համար, հուլիսի 18-ին՝ 4000 կգ սմբուկի համար, հոկտեմբերի 4-ին՝ 5000 կգ սմբուկի համար, ընդ որում հուլիս 4-ի բաշխման ցուցակին կից Պատվիրատուի կողմից ներկայացվել է ծանուցում, որ բանջարեղենի պահպանումը արդյունավետ իրականացնելու նպատակով մատակարարումներն անհրաժեշտ է իրականացնել տասնօրյա պարբերականությամբ՝ յուրաքանչյուր ՔԿ հիմնարկի բաշխման քանակի 1/3 չափով, հուլիսի 18-ի ցուցակում ծանոթությունը առհասարակ բացակայել է, հոկտեմբերի 4-ի ցուցակով պահանջվել է մատակարարումն իրականացնել երկու խմբաքանակով:

Ընկերության տնօրենը նշեց, որ անկախ բաշխման արդյունքում Ընկերության աշխատակիցները յուրաքանչյուր հիմնարկ այցելել են տաս և ավելի անգամ: Որպես ապացույց, Ընկերության կողմից Բողոքներ քննող անձին ներկայացվեցին ՀՀ ՔԾ տարբեր հիմնարկներ մրգի և բանջարեղենի մատակարարումների իրականացման փաստը հավաստող թվով 110 հարկային հաշիվներ:

Ընկերության տնօրենը հավելեց նաև, որ անկախ տրամադրված բաշխման ցուցակներից Ընկերությունը փորձել է քրեակատարողական հիմնարկների մատակարարել Պայմանագրով նախատեսված քանակի ապրանքները, սակայն վերջիններիս կողմից դրանք չեն ընդունվել պահպանման պայմանների բացակայության պատճառաբանությամբ:

Ինչ վերաբերում է դեղձի թերմատակարարմանը, ապա Ընկերության տնօրենը հայտնեց, որ Ընկերությունը դեղձի բաշխման ցուցակ էլեկտրոնային փոստի մոջոցով չի ստացել, և դրա մատակարարման ժամկետների խախտման վերաբերյալ որևէ ահազանգ չի արձանագրվել: Վերջինս ներկայացրեց նաև օգոստոսի 3-ից մինչև օգոստոսի 11-ը ժամանակահատվածի Ընկերության էլեկտրոնային փոստի մոջոցով ստացված

նամակների ցանկի կարճապատկերումը (screenshot), որտեղ ՀՀ ՔԿԾ-ից ստացված որևէ ծանուցում արտացոլված չէ:

Պայմանագրերի միակողմանի լուծման մասին ծանուցումները 16.11.2018թ. Պատվիրատուն հրապարակել է նաև www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով.

- Բողոքներ քննող անձը «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» պայմանագրի մասով արձանագրում է, որ՝

- «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով պայմանագրով նախատեսված է մատակարարել 45.000 կգ տավարի մսի պահածո, որի մատակարարման ժամկետը սահմանվել է 2018թ. 2-րդ եռամսյակում՝ 15000 կգ, 3-րդ եռամսյակում՝ 15.000կգ և 4-րդ եռամսյակում՝ 15.000 կգ:
- Կողմերի միջև կնքվել է Համաձայնագիր որի 1.1 կետով սահմանվել է հետևյալը. «Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պահեստներում առաջացել են մատակարարման ենթակա սննդամթերքի կուտակված քանակներ, կապված սնվող անձանց թվաքանակի նվազման հետ, ինչպես նաև խուսափելով սննդամթերքի ավելի մեծ քանակի կուտակումներից, որոնց պահպանումը քրեակատարողական հիմնարկների պահեստներում առաջացնում են ավելորդ դժվարություններ, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարման ենթակա ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ սահմանելով մինչև 31.10.2018թ.»:
- «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված պահածոյի քանակը կազմում է 13.801,1 կգ:
- Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված լրացուցիչ պահանջի համաձայն՝ Գնորդի պահանջով մասնակիցները պարտավոր են պահանջվող փաստաթղթերի հետ, հրավերով սահմանված եռօրյա ժամկետում, ներկայացնել առաջարկվող ապրանքի(ների) նմուշները: Մինչև յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումը՝ Գնորդի պահանջով, Վաճառողը պարտավոր է Գնորդին ներկայացնել տվյալ խմբաքանակի վերաբերյալ արտադրող կազմակերպության և(կամ) ՀՀ սննդի անվտանգության պետական ծառայության կողմից տրամադրված փորձագիտական եզրակացություն՝ ապրանքի որակին և տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

• Պատվիրատուի կողմից «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին մինչև յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումը՝ Պատվիրատուն Ընկերությունից չի պահանջել ներկայացնել տվյալ խմբաքանակի վերաբերյալ արտադրող կազմակերպության և (կամ) ՀՀ սննդի անվտանգության պետական ծառայության կողմից տրամադրված փորձագիտական եզրակացություն՝ ապրանքի որակին և տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

• Պատվիրատուն իր նախաձեռնությամբ «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ին է պատվիրել մատակարարված ապրանքների փորձաքննությունը:

• «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի կողմից 29.10.2018թ. կատարված նմուշառման վերաբերյալ 01.11.2018թ. տրվել է նույն՝ N 1/1303, թվով երկու եզրակացություն, որոնցում նմուշի արտադրանքի փորձաքննության արդյուքների թվային ցուցանիշներում առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ փորձարկման արձանագրություններից մեկում ապրանքի ստացված զտաքաշը նշված է 619,6գ, իսկ մյուսում՝ 540,4գ, որպես փորձարկման ենթակա խմբաքանակ նշվել է 122100 կգ, մինչդեռ փորձարկման ենթակա խմբաքանակը կազմել է 124 կգ 205 գրամ:

• Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ պահածոները պետք է համապատասխանեն ԳՕՍՏ-5284-84-ի պահանջներին:

• ԳՕՍՏ-5284-84-ի համաձայն՝ քլորիդների զանգվածային մասը սահմանված է 1.0-1.5 տոկոս, սակայն Պայմանագրի տեխնիկական բնութագրում և «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի 01.11.2018թ. եզրակացության մեջ, որպես քլորիդների զանգվածային մասի տոկոս, նշվել է 1.2-1.5 տոկոսը:

• Ընկերությունը 07.11.2018թ., դիմել է ՔԿ ծառայությանը և խնդրել, որպեսզի «տավարի մսի պահածո» ապրանքատեսակը հավաստագրված մեկ այլ լաբորատորիայում ենթարկվի փորձաքննության, քանի որ «տավարի մսի պահածո» արտադրող՝ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն վստահեցնում է, որ իրենց արտադրանքը համապատասխանում է պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին և «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ն այդ արտադրանքի համար տվել է ոչ ճիշտ փորձարկման եզրակացություն: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը Ընկերության խնդրանքը գնահատել է ոչ նպատակահարմար և 12.11.2018թ. գրությամբ առաջարկել է, որպեսզի «տավարի մսի

պահածո» արտադրող Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն վիճարկի «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը, պաշտպանելով իր արտադրության շահերը, որի դրա համար «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին տրամադրվել ևս 3 օր՝ փորձարկման եզրակացությունը վիճարկելու համար, սակայն հաշվի առնելով, որ նշված ժամկետն արդեն լրացել է, և չկա «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից տրված դրական փորձարկման եզրակացությունը, Պատվիրատուն որոշել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծել:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելն իրավաչափ չէ, քանի որ.

- Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված լրացուցիչ պահանջի համաձայն՝ «տավարի մսի պահածո» արտադրանքի որակի և տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ փորձարկման եզրակացությունները Գնորդի պահանջով կարող էին տրամադրվել Վաճառողի կողմից մատակարարվող խմբաքանակի արտադրող կազմակերպության և(կամ) ՀՀ սննդի անվտանգության պետական ծառայության կողմից, իսկ Պատվիրատուն բացի այն, որ նման պահանջ չի ներկայացրել Ընկերությանը, ավելին, իր նախաձեռնությամբ պահածոների փորձաքննությունը պատվիրել է «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ին, որի արդյունքում խախտվել է Պայմանագրով նախատեսված վերոհիշյալ պահանջը:

- «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից 29.10.2018թ. ներկայացված «տավարի մսի պահածո» արտադրանքի 01.11.2018թ. փորձարկման եզրակացությունները չեն կարող որակվել որպես արժանահավատ կամ ճշգրիտ եզրակացություններ, քանի որ առկա է նույն՝ 01.11.2018թ. N 1/1303 երկու եզրակացություն, որտեղ նույն ապրանքի փորձաքննության արդյուքների թվային ցուցանիշները տարբեր են:

Բացի այդ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ նված հանգամանքների առկայության պայմաններում Պատվիրատուն պետք է հնարավորություն տար Ընկերությանը ներկայացնելու «տավարի մսի պահածո» արտադրանքի որակի և տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ փորձարկման եզրակացություն՝ տրամադրված Վաճառողի կողմից մատակարարվող խմբաքանակի արտադրող

կազմակերպության և(կամ) ՀՀ սննդի անվտանգության պետական ծառայության կողմից, այլ ոչ թե առաջարկել եռօրյա ժամկետում վիճարկել «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունն, ինչը ակնհայտ է, որ անիրատեսական է:

- Բողոքներ քննող անձը «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1» պայմանագրի մասով արձանագրում է, որ՝

• «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 13.04.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/31-1» ծածկագրով պայմանագրով նախատեսված է մատակարարել 4000 կգ դեղձ 2018թ. 3-րդ եռամսյակում, սալոր 600 կգ՝ 3-րդ եռամսյակում, բիբար 10000 կգ՝ 3-րդ եռամսյակում, պոմիդոր 16000 կգ՝ 3-րդ եռամսյակում, վարունգ 10000 կգ՝ 3-րդ եռամսյակում, ճակնդեղ 27000 կգ, որից 7000 կգ՝ 3-րդ եռամսյակում, իսկ 20000 կգ՝ 4-րդ եռամսյակում, սմբուկ 20000 կգ՝ 3-րդ եռամսյակում:

• Պատվիրատուն 16.11.2018թ. թիվ 40/11-6332 գրությամբ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին հայտնել է, որ Պայմանագրի N 1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, մրգերի և բանջարեղենների (բացի ճակնդեղից) մատակարարման ժամկետը սահմանված էր 2018թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, որը երկարաձգվել էր մինչև 31.10.2018թ.-ը, սակայն մինչ օրս նշված ապրանքները թերի են մատակարարվել (բացի ճակնդեղից և սալորից), իսկ դեղձ ընդհանրապես չի մատակարարվել: Վերը նշված պայմանագրի շրջանակներում թերի մատակարարված մրգերի և բանաջարեղենների քանակները հետևյալն են՝

Հ/Հ	Անվանում	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Պայմանագրով նախատեսված քանակ	Մատա-կարարված քանակ	Չմատակարարված քանակ
1	դեղձ	կգ	159	4000	-	4000
2	բիբար	կգ	139,98	10000	5670	4330
3	պոմիդոր	կգ	118,98	16000	3644	12356
4	վարունգ	կգ	96	10000	7769	2231
5	սմբուկ	կգ	94,98	20000	12613	7387

• Կողմերի միջև կնքվել է Համաձայնագիր որի 1.1 կետով սահմանվել է հետևյալը. «Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների

պահեստներում առաջացել են մատակարարման ենթակա սննդամթերքի կուտակված քանակներ, կապված սնվող անձանց թվաքանակի նվազման հետ, ինչպես նաև խուսափելով սննդամթերքի ավելի մեծ քանակի կուտակումներից, որոնց պահպանումը քրեակատարողական հիմնարկների պահեստներում առաջացնում են ավելորդ դժվարություններ, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարման ենթակա ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ սահմանելով մինչև 31.10.2018թ.»:

Պատվիրատուի ներկայացուցիչը բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի տեղակալի կողմից ստորագրված և հաստատված «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին՝

- 04.07.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից հուլիս ամսվա ընթացքում ենթակա է մատակարարման 3000 կգ բիբար, 6000կգ պոմիդոր և 6000 կգ վարունգ, ընդ որում՝ մատակարարումները պետք է իրականացվեն 10-օրյա պարբերականությամբ՝ բաշխման ենթակա ընդհանուր քանակի 1/3-ի չափով,

- 18.07.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից հուլիս ամսվա ընթացքում ենթակա է մատակարարման 4000 կգ սմբուկ,

- 07.08.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից օգոստոսի 8-ից 18-ը ընկած ժամանակահատվածում ենթակա է մատակարարման 3000 կգ սալոր և օգոստոսի 20-ից 30-ը ընկած ժամանակահատվածում՝ 2000 կգ դեղձ,

- 27.08.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից օգոստոսի 28-ից սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում ենթակա է մատակարարման 3000 կգ բիբար, 2000 կգ ճակնդեղ, 5000 կգ պոմիդոր և 4000 կգ վարունգ, ընդ որում՝ մատակարարումները պետք է իրականացվեն 10-օրյա պարբերականությամբ՝ բաշխման ենթակա ընդհանուր քանակի 1/3-ի չափով,

- 06.09.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից սեպտեմբերի 10-ից 14-ը ընկած ժամանակահատվածում ենթակա է մատակարարման 3000 կգ սալոր,

- 04.10.2018թ. տրամադրված բախշման ցուցակը, որի համաձայն, Ընկերության կողմից հոկտեմբերի 4-ից 22-ը ընկած ժամանակահատվածում ենթակա է մատակարարման 2000 կգ բիբար, 1500 կգ ճակնդեղ և 5000 կգ սմբուկ, ընդ որում՝ մատակարարումները պետք է իրականացվեն 7-օրյա պարբերականությամբ՝ բաշխման ենթակա ընդհանուր քանակի 1/2-ի չափով,

- 13.11.2018թ. տրամադրված ճակնդեղի ճշտված բաշխման ցուցակը, որի համաձայն, նոյեմբեր ամսվա ընթացքում ենթակա էր մատակարարման 13.000 կգ ճակնդեղ, ընդ որում «Դատապարտյաների հիվանդանոց» ՔԿ հիմնարկին բաշխումով նախատեսված 650 կգ ճակնդեղի քանակությունից 350 կգ-ը մատակարարել «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկ, իսմ մնացած 300 կգ-ը մատակարարել «Դատապարտյաների հիվանդանոց» ՔԿ հիմնարկ:

- Ըստ Ընկերության տնօրենի էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է ընդամենը երեք բաշխման ցուցակ ՀՀ ՔԾ ՆՏ ապահովման բաժնի պետի ստորագրությամբ՝ 2018թ. հուլիսի 4-ին՝ 3000 կգ պղպեղի համար, 6000 կգ լոլիկի համար, 6000 կգ վարունգի համար, հուլիսի 18-ին՝ 4000 կգ սմբուկի համար, հոկտեմբերի 4-ին՝ 5000 կգ սմբուկի համար, ընդ որում հուլիս 4-ի բաշխման ցուցակին կից Պատվիրատուի կողմից ներկայացվել է ծանուցում, որ բանջարեղենի պահպանումը արդյունավետ իրականացնելու նպատակով մատակարարումներն անհրաժեշտ է իրականացնել տասնօրյա պարբերականությամբ՝ յուրաքանչյուր ՔԿ հիմնարկի բաշխման քանակի 1/3 չափով, հուլիսի 18-ի ցուցակում ծանոթությունը առհասարակ բացակայել է, հոկտեմբերի 4-ի ցուցակով պահանջվել է մատակարարումն իրականացնել երկու խմբաքանակով:

- Պայմանագրի 2.2.4 կետի համաձայն՝ Գնորդը պարտավոր է ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

- Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ

հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

• Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը Պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշվված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

• Պատվիրատուի կողմից Պայմանագրի կատարման շրջանակներում Ընկերությանը ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին երբևէ ծանուցում չի ուղարկվել:

• Առկա է Պայմանագրով նախատսված ապրանքների մատակարարման վերաբերյալ կազմված և եկկողմանի ստորագրված ու կնիքված շուրջ 110 հարկային հաշիվներ, ինչը վկայում է, որ քրեակատարողական հիմնարկները Ընկերությունից ընդունել են ոչ թե բաշխման ցուցակներով նախատեսված քանակի ապրանքները, այլ դրանք ընդունվել են ավելի քիչ քանակով, կապված՝ տվյալ պահի դրությամբ անհրաժեշտ քանակության մասով:

• Պատվիրատուն 16.11.2018թ. թիվ 40/11-6332 գրությամբ միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելն իրավաչափ չէ, քանի որ Պատվիրատուն պարտավոր էր ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի

խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից, ինչը Պատվիրատուի կողմից որևէ անգամ չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.11.2018թ. թիվ 27/26-3/21830-18 գրությամբ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00886056) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ